ԱԶԳԱՅԻՆ

ՄՐՑԱՆԱԿ

ԵՒ ՅՈՎՍԵՓ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԴՊԼԱՐԵՑԻ.

Իմաստասիրեան Աբարաթ ամառանոց.

Ամենայն ազգ՝ որ ունեցել է մի դարաւոր կեանք և ներկայումս էլ կամենում է անդուլ յառաջ դիմել՝ պարտ է սիրով փոյթ տանել իւր պատմութեան և լեզուի մշակութեան վերայ. զի փորձով ստուգուած է որ՝ առանց այս իրարու հետ սերտ կապուած գիտութիւնների հիմնաւոր ուսման՝ ոչ մի ազգ կարող չէ բուն ազգային հոգւով ի լրումն ածել նոր ժամանակիս պիտոյքներն և կանոնաւոր զարգացումն տալ իւր բարոյական ոյժերին։

Ուրախալի է տեսնել՝ որ մեր ազնեայք իրրև հետևողք այս անհերքելի ճշմարտութեան՝ մանաւանդ վերջին ժամանակներում առանձին խնամք են ընծայում ազգային պատմութեան և նուիրական Հայ լեզուին, որ դժբախտաբար տեղ տեղ արդէն դադարեալ էր հնչելուց։

Ողջունելով այս աւետաւոր երևոյթն ազգային դպրութեան մէջ՝ մեք ևս կամեցանք գէթ փոքրու իմն քաջալեր հանդիսանալ նորան և այս խորհրդով բարւոք համարեցինք մի դրամական մրցանակ նշանակել մեր Պատմութեան և Մայրենի Լեզուին վերաբերեալ լաւագոյն շարադրութեանց համար, որոյ պայմանները խնդրում ենք հրատարակել Ձեր յարգելի "Արարատի,, մէջ ի գիտութիւն ամենայն Հայ բանասիրաց։ Այն խնդիրը մեր միւս ազգային լրագիրներին ևս ուղղելով՝ մնամ կատարեալ յարգանաք։

ՅՈՎՍԵՓ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԴՊԼԱՐԵՑԻ.

Ի 6 Մարտի 1875,

Ս. Պետերբուրգ.

Պայմանք Մրցանակի.

1.—Մրցանակի հետամուտ լինել կարող են ձեռագիր *) ու տպուած գրաբար և աշխարհաբար ինքնորոյն (նոր հեղինակեալ) շարադրութիւնք իմաստին Հայոց քաղաքական և եկեղեցական պատմութեան, ազգային օրէնսդրութեան, հնութեանց, մայրենի լեզուի և գրականութեան, որպէս և թատրոնական յօրինուածք։

2.—Ձեռն կարող դիմել մրցանակի՝, օտար լեզուներից թարգմանուած շարադրութիւնք. բ, դասագիրք. գ, արդէն մի անգամ մրցանակ գրաւած աշխատութիւնների երկրորդ և յաջորդ տպագրութիւնքը. դ. մրցանակաբաշխութեան ժամանակից երկու տարի առաջ տպուած շարադրութիւնքը։

3—Թատրոնական գրուածներից պահանջւում է՝ որ նոցա բովանդակութիւնն առնուած լինէր հին կամ նոր ազգային կեանքից։

4.—Ամբողջ մրցանակի գումարը կազմում է հինգ հարիւր ռուբլի արծաթ, որ բաժնուելու է ամեն երկու տարի մի անգամ։

5.—Եթէ մրցանակի մատչող գրուածների մէջ մրցանակի արժանի գործեր գտնուին՝ նոքա ըստ իւրեանց արժանա-

(*) Պարտաւորեալ՝ որ՝ ձեռագիրները մաքուր ու պարզ լինին.

ւորութեան կամ ամբողջ մրցանակը (500 ռ.) և կամ սորա մէկ մասը կընդունին։

6.—Գրաքննիչ յանձնաժողովն ամեն երկամեակ լրագիրներին միջոցաւ կհրատարակէ իւր դատողութիւնքը մրցանակ գրաւող գործերի վերայ և կանխաւ կը-յայտնէ թէ ուր և յանուն որոյ առաքուելու են յաջորդ երկամեակի մրցանակին հետամուտ շարադրութիւնքը։

7.—Առաջին մրցանակը տրուելու է 1877 թ. սկզբում, իսկ միւսները հետզհետէ ամեն մի երկամեակ։

8.—Մրցանակի հետամուտ շարադրութիւնքը պարտին առաքուիլ իւրաքանչիւր երկամեակի ընթացքում մինչև յաջորդ մրցանակաբաշխութեան տարուայ Յունվար ամիսը։

Ծանօթ. Առաջին՝ այս ինքն 1877 թ. մրցանակին մատչող շարադրութիւնքն ուղարկուելու են ի Պետերբուրգ Տէր Յովհաննէս քահանայ Պօղոսեանին՝ Невскій проспектъ, д. Армянской церкви.

St. Pétersbourg, Perspective de Newsky, maison de l'église Arménienne.

(Յաջորդ թերթի կթողուք այսպիսի գովելի և բարենպատակ Մրցանակի վերայ մեր մի քանի խօսքը)։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան Աբարար Հանդէսի.

Բարեգործական ընկերութիւն Ռուսաց Ատրախանայ առաջի արար Հոգաբարձութեանս Ծբխական—Հոգևոր երկսեռ դպրոցաց Հայոց քաղաքիս զմի հարիւր չէոռն և եօթն ռուբլիս՝ կը-ցորդելով՝ թէ զայս գումար, զկէս մասն հանեալ ի գոյացեալ դրամոց ի թատրոնական ներկայացմանէ, որ եղև միջնորդութեամբ Հայոց երիտասարդաց ի 14 Փետրվարի տարւոյս՝ նուիրեալ է յօգուտ Օրիորդական դպրոցի Հայոց քաղաքիս։

Ուստի Հոգաբարձութիւնս խնդրէ ի խմբագրութենէդ հրատարակել զայսպիսի ուսումնասիրական նուիրագործութեանց վերոյիշեալ Ընկերութեան նշանաւոր գումարքն՝ յէջս «Արարատ» ամսագրոյ ի գիտութիւն համալրգայնոց։

Հոգաբարձուք Ս. Պօղոսեանց
Սար. Բուրջալեանց
Գրիգոր Սողոմոնեանց

№ 13

Ի 11 Մարտի 1875 մ.
Ատրախան։

ՀԱՇԻՒ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒԱՅ.

Խմբագրութեան Աբարար Հանդէսի.

Խորհրդական Ընդամբ առաքելով ընդ սմին զհաշիւ գումարաց Մարդասիրական Ընկերութեան վասն 1874 ամի՝ խոնարհաբար խնդրում են թոյլ տալ տպագրել նորան Ձեր պատուական ամսագրի թերթերում ի գիտութիւն Ընդամեաց Ընկերութեան և ամենայն հասարակութեան Հայոց։

Նախագահ Խորհրդոյ Ս. Բանանեանց
Անդամք Խորհրդոյ Ներսէս Կարապետեանց
Գրիգոր Դիլբարեանց
Յակոբ Ալպէտեանց
Աստարիկ Սատուրեանց
Գրիգոր Այվազեանց
Գանձապետ Գրիգոր Թումանեանց
Ատենադպիր Ս. Վարշամեանց

15 Փետրվարի 1875 մ.
Ի Բագու։

(Հաշիւ տպեց և ծախսաց գումարաց Մարդասիրական Ընկերութեան յանուն Արքայն Գրիգորի Լուսաւորչի ի Բագուվառն 1874 մ.)

ՄՈՒՏՔ.

Առ 1ն Յունուարի 1874 ամի մնացել էր ընկերապատկան գումար,